Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՖՐԻԿ

Տասներեքերորդ դարում Հայկական Կիլիկիայում պայծառաշունչ մի բանաստեղծ էր ապրում: Մի օր հարկահանները չոքեցին նրա դռանը: Ամեն ինչ տվեց հարկի դիմաց՝ և՛ տուն, և՛ կալվածք, և՛ իր ու ինչք: Բայց պարտքը մարելու համար ունեցածը չհերիքեց: Եվ դաժան հարկահանները գրավ վերցրին նրա որդուն: Վերցրին ու տարան՝ աստված գիտե, թե ուր: Եվ հայրը քիչ մնաց վշտից խենթանար:

Որդուն գտնելու հույսով բանաստեղծն սկսեց ոտքի տակ տալ Կիլիկիան: Ինքն իրեն երդվել էր, որ բերանը հացի կտոր չի դնի այնքան ժամանակ մինչև, չգտնի որդուն: Գյուղից գյուղ անցնելիս հաց չէր խնդրում: Երբեմն թեքվում էր դեպի արտերը: Ձեռք չէր տալիս ոչ մի օրանի: Արտեզրերից՝ փշածածկ թփերի միջից քաղում էր դեռահաս ու կաթոտ ցորենի հասկեր, փնջեր անում, խանձում կրակի վրա, եղի դարձնում ու սնվում դրանով: Եղին համեղ աղանձ է: Բայց բանաստեղծին թվում էր, թե արտեզրերին բուսած հասկերը դառն հատիկներ են ունենում: Եվ երբեմն որոմ էր խառնում ցորնահատիկներին, որ եղին դառնահամ լինի:

Այդ ժամանակներում Կիլիկիայի հայերը եղիին ֆրիկ էին ասում: Եվ երբ բանաստեղծին հարցնում են, թե ինչ է իր անունը, նա պատասխանում էր.

–Առայժմ Ֆրիկ:

Ասում է ու բանաստեղծական տողով հավաստում իր անունը.

Ոչ ծլեմ, ոչ բուսանեմ,

Ձերդ զաղընձած սերմ եմ գերիս:

Իրեն համարեց աղանձած սերմ, որովհետև մնացել էր անզարմ: Բանաստեղծը չգտավ իր որդուն և մարդկանց հիշողության մեջ անմահացավ Ֆրիկ անունով:

Հ. Խաչատրյան, «Հացապատում»